

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՓԵՍԱՑԻ (ԵՊՍ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի նպաստ հայկական բանասիրութեան կը հրատարակենք հետեւեալ պատմական քաղաքացի կտորները, որոնք կարեւոր դէպքեր կը պատկերացնեն մեր ազգային եկեղեցական եւ քաղաքական կեանքի վիճակէն՝ վեցերորդ դարու երկրորդ կէսի շրջանին:

Հեղինակը՝ Յովնանէս Ասիացի կամ Եփեսացի անուամբ ծանօթ ասորի եպիսկոպոսն է, ծնած ի Տիգրանակերտ վեցերորդ դարուն սկիզբները եւ վախճանած ունսրնամեայ՝ շուրջ 585 ին: Հռչակաւոր եղած է իբրեւ միաբնեայց աղանդին պաշտպան եւ Քաղկեդոնական Ժողովին հակառակորդ կուսակցութեան առաջնորդի գործունէութեամբ Պոլսոյ, ընդհանուր Փոքր Ասիոյ եւ մանաւանդ իր ազգին՝ ասորացի մէջ: Իր վարուց նկատմամբ կը պակսին մեզի որոշ մանրամասնութիւններ. գիտենք միայն որ դեռ մէկուկէս տարեկան մանուկ հասակին՝ Մարոն անուամբ սիւնակեաց կրօնաւորի մը միջոցաւ հրաշագործ բժշկութիւն կ'ընդունի ծանր հիւանդութենէ մը, որ արդէն իր երկու երիցագոյն եղբայրները մահուան զոհած էր միեւնոյն տարիքին մէջ: Յետ երկու տարուոյ իբրեւ ուխտական նուէր եկեղեցւոյ ժառանգաւորաց դասուն՝ կը յանձնուի զինքն առողջացնող միայնակեցին ձեռքը եւ մինչեւ անոր մահը քովը կը մնայ շուրջ տասնեակինգ տարի: Լեզուագէտ, հմուտ ուսմանց եւ գործունեայ քարոզիչ, հոսկ ուրեմն կը բարձրանայ, իբրեւ միաբնեայց հերձուածին առաջնորդ, Եփեսոսի ասորացի եպիսկոպոսութեան աստիճանին: Տարօրինակ զուգադիպութեամբ մը հաւասարապէս կը վայելէ բիւզանդական կայսերաց եւ արքունեաց թէ՛ հալածանքը եւ թէ՛ պաշտպանութիւնը:

Իբրեւ գրաւոր հեղինակութիւն թողած է միայն երկու պատմական գործեր՝ ասորերէն լեզուով. 1) Վարք արեւելեան սրբոց, որ հաւաքուած մ'է կենսագրութեանց միաբնեայ կրօնաւորներու՝ որոնք կ'ապրէին հեղինակին հայրենիք Տիգրանակերտի նախնական շրջանակին մէջ. եւ 2) Եկեղեցական պատմութիւն, բաժնուած երեք մասերու եւ տասնեակու զբերու, որոնցմէ սակայն ցարդ մնացած են միայն երկրորդ մասին պատառիկներ՝ սակաւամիւ, իսկ երրորդ մասը գրեթէ ամբողջութեամբ իր վեց գրքերուն. ուսկից առնուած է մեր քաղաքացին:

Հետեւեալ թարգմանութիւնը կատարուած է Վ. Հ. Ալիշան Վ. ի յանձնարարութեամբ եւ ազուցուելով համար իր Հայկարան հաւաքածոյին մէջ՝ մեր գերմանագէտ վարդապետներէն մէկուն ձեռքով: Այս պատճառաւ մենք ալ այժմ կը ներկայացնենք զայն միեւնոյն նախկին գրաբար վիճակին մէջ: Հայերէն թարգմանութեանս առաջնորդ առնուած է պաւլերացի հռչակաւոր երրայագէտ եւ ասորագէտ եւ Միւնխէնի համալսարանին Ուսուցչապետ Dr. J. M. Schönfelder կանոնական ասորի բնագրին վրայէն կատարած գերմաներէն հրատարակութիւնը Die Kirchen-Geschichte des Johannes von Ephesus - aus den Syrischen übersetzt - եւն. München 1862: Սոյն կարեւոր եւ ընտիր հրատարակութիւնը կը թուի վրիպած ըլլալ Գեր. Tisserant ի ուշադիր աչ-

քէն, երբ Vacant Աստուածաբանական մեծ բառարանին մէջ (Dict. de Théologie Catholique) խօսելով Յովնանու Եփեսացւոյ Եկեղեցական պատմութեան վրայ, անոր զանազան հրատարակութեանց յիշատակութեան մէջ կ'անտեսէ յիշել նաեւ զայս: Schönfelder իր հրատարակութեան յառաջաբանին մէջ յատկապէս կը շեշտէ թէ ինչպէս ասորի հռչակաւոր պատմաբան եւ համայնագէտ նոյնպէս միաբնեայ Մալաթիայի եպիսկոպոս Գրիգոր Այ ուլ Ֆարաճ կամ Bar - Hebræus (1228-1288) յաճախ ընդարձակ քաղաքացիներ ունի եւ երբեմն նաեւ բառ առ բառ մէջբերումներ Յովն. Եփեսացւոյ սոյն Եկեղեցական պատմութենէն:

ԽՄԲ.

ԳԻՐԲ Բ.

ԳԼՈՒԽ ԺԲ. — Որ ինչ ի կարողիւնէն Դոռին քաղաքի Հայոց Մեծաց, որ ընդ Պարսից իշխանաբեւոյն, և յայոց եպիսկոպոսաց ի մայրաքաղաքին պատմեցաւ:

Թէպէտեւ խոստացայ չպատմել ինչ զոր չիցէ մեր անձամբ տեսեալ և զրեւ միայն զառտնին հետազոտութիւնս, առնելեր լինելով. մանաւանդ որ ինչ զորեւալ եղեն ի բովանդակ յայնմ ժամանակի՝ զորմէ մերս պատմութիւն, սակայն արժան համարիմ այժմիկ իրրեւ յիշատակաց արժանիս պատմել, և զոր ոչ ի պարզամտաց և ի նուաստագունից ոմանց պատմեալ եղեւ ի Հռովմայեցւոց աթոռանիստ քաղաքիս առաջի բազմաց, որ ինչ անցին յերկրի իշխանութեան Պարսից: Զստուգութիւն իրացն ոչ կարեմը երաշխաւորել իրրեւ աղանատեսը, զի հեռի եմք յոյժ տեղեալ, այլ պատմեմք միայն որ ինչ ի կաթողիկոսէն Դոռին քաղաքի Հայոց՝ որ ի մասին Պարսից և յայլոց եպիսկոպոսաց որք առ նմա էին՝ պատմեցաւ առաջի ամենեցուն յետ փախստեանն անտի այսր, պատասպարել ընդ քրիստոնեայ տէրութեամբ, և գտին ընդունելութիւն մեծ ի բազմայաղթ կայսերէն: Արդ պատմէին նոքա այսպէս ասելով յանդիման բազմաց, և զպատմեալսն երդմամբ եւս հաստատէին:

Քանզի մոգը, որ ի մեծամեծաց աշխարհին Պարսից համարին, իրազգած լինելով, եթէ ըստ հրամանի և ըստ կամաց կայսերն Հռովմայեցւոց յամենայն գաւառս և ի քաղաքս բովանդակ տէրութեան

իւրոյ ամենեցուն կայ պատուէր հրամանի ի վերայ հնազանդել և զառնալ ի հաւատս իւր. և թէ զամենեւեան՝ որ ընդդէմ դառնան և ոչ հնազանդին հրամանաց և կամաց իւրոց՝ տայ հալածել, ի բանտ արկանել, և զբաւել զամենայն ստացուածս նոցա և հուսկ ապա և սպանանել զնոսա. և եթէ այս ամենայն անշուշտ լինի յաշխարհին Հոռոմոց, ապա և մեզ արժան է ի մերում աշխարհիս առնել նոյնպէս, զամենայն կրօնս որք են յաշխարհիս մերում՝ զարձուցանել ի մեր օրէնս:

ԺԹ. — Թե զինչ խօսեցան Մոգքն առ քաղաքս իւրեանց խոսքով, և որ ինչ զործեցան:

Յետ այնորիկ ապա ժողովէին միաբան ամենայն Մոգք, եւ երթեալ ասէին առ թագաւորն խոսքով (Նուշիրեւան). «Թագաւոր, յաւիտեան կեաց. մեր լուաք եթէ կայսրն Հոռոմոց զամենեւեան որ ի թագաւորութեան իւրում ստիպէ, նեղէ եւ հաւանեցուցանէ՝ յանձն առնուլ զհաւատս և զկրօնս իւր: Զբազումս ցարդ արար նա երկրպագուս Աստուծոյն իւրոյ բռնութեամբ, և որք ոչ յանձն առնուն հնազանդել, հալածէ և վարէ զնոսա ի բաց ի սահմանաց աշխարհին իւրոյ: Ապա և աստուածութիւն քո հանցէ հրաման, առնել եւ աստ յաշխարհին քում զնոյն օրինակ. զի ամենայն կրօնք դարձցին ի զեն քո, և ամենայն ոք որ ի թագաւորութեանդ իցէ՝ քումդ աստուծոյ միայն երկիր պագանիցէ: Էւ որ իշխիցենն ընդդէմ կալ հրամանի քում՝ կարճեսցին ի

կենաց» : Իբրեւ զայս լսէր թագաւորն Խոսրով ի Մոզուցն, հաւանէր առնել ըստ բանից նոցա : Անդէն եւ անդ սկսանէր ստիպել զքրիստոնեայս, և յառաջ քան զամենայն տայր ունել զերիս յեպիսկոպոսաց հանդերձ մեծագոյն մասամբ պաշտօնէից եկեղեցւոյ, և բազմաց ի ժողովրդեանէն և ստիպէր ուրանալ զհաւատս իւրեանց եւ երկիր պագանել ընդ նմա աստուածոցն իւրոց ստոց՝ արեգական, հրոյ և այլոց կոոց : Այլ նոքա հակառակէին նմա արիարար ընդդէմ կացեալ, խոստովան լինելով ասէին . Մեք, ո՞վ թագաւոր, քրիստոնեայք եմք . երկիր պագանեմք եւ փառաւորեմք զԱստուած զարարիչն երկնի և երկրի և զծովու, և որ ի նոսա են արարածք : Ոչ կարեմք ուրանալ զնա՝ զարարիչն ամենայնի, եւ արարածոց նորին պաշտօն մատուցանել : Մի՛ խաբեսցեն զքեզ միտք քո, թագաւոր, զի դու ընդ մարմինս մեր կարես անցուցանել զոր և կամիս, այլ ի ձեռս Աստուծոյ են հոգիք մեր, յորոց վերայ քեզ չիք բնաւ իշխանութիւն :

Իբրեւ լսէր թագաւորն զայս ամենայն և զսոցին նման բազումս արժանի եպիսկոպոսութեան վկայութիւնս, տայր վաղվաղակի մորթեղերծս առնել զնոսա . եւ այսպէս մեռանէին . և այլ բազում չարահաւան հասուցանէր նա քրիստոնէից : Քանզէր զբազում վանորայս և զեկեղեցիս, տայր զբազումն ձերբակալ առնել և արկանել ի բանտ, հպարտացեալ յոյժ ի միտս իւր : Յայնժամ բանայր նա զքերան իւր ի վերայ Քրիստոսի ասելով . Տեսցուք թէ զինչ կարասցէ առնել ինձ Քրիստոսն՝ աստուածն քրիստոնէից զոր ես ոչ գիտեմ թէ ո՞վ կամ զինչ իցէ : Զայս եւ զսոցին նման յովով ինչ սասցեալ և արարեալ է թագաւորին Պարսից, ասէին եպիսկոպոսունքն այնորիկ, մինչչեւ էր Հայաստանեայց ընդ Հոռոմոց իշխանութեամբ հնազանդեալ : Ահա յաղագս այսոցիկ տայր արքայն Պարսից շինել ատրուշանս յամենայն սահմանս աշխարհին Հայոց որ ի մասին Պարսից :

Ի. — Սկիզբն բնութեան Պարսից քաղաքին ի վերայ Քրիստոնէից մեծին Հայոց և այլն :

Յետ այսց բանից պատմէր կաթողիկոսն եւ որ ընդ նմա, եթէ առաքեաց թագաւորն գործակալ 2000 հեծելովք ըստ պառագինօք յաշխարհս մեր, որ հրաման առեալ եկեալ հասանէր նախ առ մեզ ի քաղաք մեր և կամէր անդ շինել ատրուշանս չաստուածոց թագաւորին : Եւ իբրեւ եցոյց ինձ եւ քաղաքացւոցն զպատուէր հրամանին, ջեռեալ իմ նախանձու, եւ յարուցեալ ընդ իս բովանդակ բնակչաց քաղաքին՝ բողոք բարձաք ընդդէմ հրամանին, ասելով . Մեք ծառայք եմք արքայից արքային եւ հատուցանեմք նմա զհարկն, այլ և քրիստոնեայք եմք և յիւս հաւատոց ոչ հնազանդիմք արքայի, եթէ վասն ճշմարտութեան հաւատոցս մերոց մեռանել եւս հասանիցէ ի վերայ մեր : Քանզի և առ ժամանակօք Շապուհ արքայից արքայի եղեւ ինդիրս այս, և նա կամէր կառուցանել աստ ատրուշանս : Այլ միախումբ ժողովեալ բնակչաց աշխարհիս մերոյ ետուն մարտ պատերազմի զամս եօթըն : Յետ այնորիկ ետ նա մեզ օրէնս և հրամայեաց քարոզ կարդալ, թէ այլ մի եւս լիցի իշխանութիւն զօրէնս քրիստոնէից խուզել և քննել : Եւ յանդիման առնեաց նմա զօրինակ հրովարտակին :

Այլ նա և ոչ այնու զիջանէր, այլ ըստ հրամանի արքային բռնի ձեռն ի գործ արկանէր նշանակել զտեղի հիմանն, փորել հիմն արկանի, և սկսաւ շինել, և էր վառեալ պատրաստեալ ի զէն և ի ճակատ պատերազմի : Աղաչեցի զնա բազում թախանձանօք, և ոչ բնաւ լսէր, և գոզցես իմն ունչս առնէր ինձ : Յայնժամ առաքեալ ընդ ամենայն կողմանս գաւառին ծանուցի զայս, և լուեալ մարդկանն, ի նախանձ վառէին վասն հաւատոցն որ ի Քրիստոս, և գումարէին ամենեքեան իբրեւ զայր մի : Ժողովեցան իբրեւ տասն հազար վառեալք ի զէն պատերազմի, կեալ եւ մեռանել վասն Քրիստոսի և ոչ տալ թոյլ

շինելոյ յերկրի իւրեանց զատրուշան մոգուց և հեթանոսական պաշտամանց : Եւ իբրեւ ժողովեցան ի մի ամենայն մեծամեծք և զլիաւորք աշխարհին, չոքաք առ մարդպանն ի տեղին ուր սկսեալն էր շինել զատրուշանն . խօսեցաք ընդ նմա բազում ինչ, եւ ձայն բարձեալ ընդդէմ նորա ասէաք : Մեք ծառայք արքայից արքայի, քրիստոնեայք եմք, այլ ի մասին հաւատոց ոչ կարեմք ծառայել մարդոյ և ոչ ակն ածել յուսմեք : Թէպէտեւ ինքնին թագաւորն անձամբ եկեացէ, սակայն և այնպէս ի մերում աշխարհի յաւիտեան ոչ տացուք թոյլ շինել ատրուշան հեթանոսական՝ ցորչափ իցեմք կենդանի : Արդ արի զնա յաշխարհէ աստի առանց սրոյ և պատերազմի, եւ երթ առ թագաւորն եւ պատմեա՛ նմա զարդարութիւն խնդրոյ մերոյ որ վասն հաւատոց . օրէն է նմա հրամայել մեզ առնել զոր ինչ և կամի բայց շինել ատրուշան յաշխարհի մերում / չտամք թոյլ ցորչափ իցեմք կենդանի :

Եւ յետ բազում վիճից երկոցունց կողմանցն, սկսաւ մարդպանն, ըստ հրամանի արքային յառաջ վարել զշինութիւնն, պատերազմելով միանգամայն ընդ բնակչաց գաւառին, եւ ասէր այսպէս . Տեսէք զի հակառակ կայք հրամանաց արքայից արքային և թշնամանէք զնա . որոյ է իշխանութիւն տալոյ հրաման սատակել զձեզ . զգոյշ լերուք, և տեսէք զոր գործէք : — Այլ իբրեւ ետես զմեծ պատրաստութիւնն ընդդէմ իւր եւ ծանեաւ զթիւ բազմութեան գնդին (Հայոց), տեղի տայր սպառնալիօք եւ վկայ զնոսա կոչելով : Եւ զնաց բարկութեամբ եմուտ առ թագաւորն եւ ծանոցց նմա զամենայն : Եւ իբրեւ լսէր զայն թագաւորն՝ բրդէր ի բարկութիւն մեծ . վճիռ հատանէր չարաչար մահու ի վերայ ամենայն բնակչաց գաւառին . առաքէր ընդդէմ նոցա զմարդիկ մարդպանին արս 15,000 ի պատերազմ, և հրաման տայր զի եթէ ընդդէմ դարձցին հրամանին՝ սատակեսցեն զընդդիմացին և շինեսցեն ատրուշան ի տեղուշն : Եւ իբրեւ գիտացին զայս բնակիչք աշխարհին՝ եկեալ գումարեցան ի մի իբրեւ 20,000 արանց վառելոց ի մարտ, տալ պատերազմ վասն Քրիստոսի, մինչեւ ի մահ : Արդ եկին հասին թշնամիքն . և ճակատեցան (մերքն) ընդդէմ նոցա . կարգացին զանունն Յիսուսի և յարձակեցան ի վերայ նոցա . եւ Քրիստոս խորտակեաց զնոսա առաջի բնակչաց գաւառին և որպէս զմի այր կոտորեցին զամենեւին զնոսա . սպանին և զմարդպանն և հատեալ զզուլիս նորա, առաքեցին առ Յուստինիանոս Պատրիկ, որ յայնմ ժամանակի նստէր մերձ ի սահմանագլուխ անդր ի Թէոդուպոլիս : Ահա այս ամենայն և որ զկնին եղեւ ընդարձակագոյն ասացաւ և պատմեցաւ :

ԻԱ. — Թե՛ գիւն յետ այնորիկ ի Խոսրովայ ի Պարսկահայս եղև, և քե՛ որպէս աշխարհն ամենայն ել ի ձեռաց Պարսից և եմուտ ընդ իշխանութեամբ Յուսեպ :

Եւ իբրեւ այս եղեւ և բովանդակ աշխարհն Հայոց Մեծաց ետես, եթէ բացաւ բուռն պատերազմ ի վերայ իւրեանց ի ձեռն անօրէն թագաւորին Պարսից, ի մի վայր գումարէին յամենայն կողմանց քրիստոնեայք, եւ փութացեալ զնային խնդրել օգնութիւն ի քրիստոնեայ թագաւորէն, ասելով . Կամիմք այսուհետեւ հպատակել քրիստոնեայ թագաւորիդ, և եկաք փութանակի գտանել օգնութիւն ի Հոռովմէական ինքնակալութենէդ, զի զերծուցես զմեզ ի բռնութենէ մոգուցս : Եւ այլ բազում ինչ որ յանդիման օգոստափառ մերոյ կայսերն և բովանդակ ձերակուտին՝ կաթողիկոսն և այլ եպիսկոպոսունք որ ընդ նմա՝ պատմէին . զոր մեք սուղ բանիւք առաջի եղաք ի պատմութեանս : Յետ այսր մեծի պատերազմի եւ կոտորածի որ առ մեօք եղեւ անդ, ասէին նոքա, և թէ զօրք երկոցունց հարան ընդ միմեանս . ի պարտութիւն մատնեցան Պարսք, մինչեւ ըզփիլս իւրեանց թողուլ առ մեզ : Բայց մեք սիրելով զհամառօտութիւն՝ զբազում իւրեք զանց առնեմք աստ :

ԻՔ. — Ձոր ինչ կարողիկոսն ինքնին իւրովքն հանդերձ պատմեր, եւն.:

Ահա զայս ամենայն և զայլ ինչ բազում պատմէր կաթողիկոսն Դուռնայ քաղաքի որ ի Պարսկահայս, նաեւ որ ընդ նմա եպիսկոպոսունք և այլ բազում ազատ մարդիկ ի մերումս մայրաքաղաքի առաջի բազմաց: Եւ իբրեւ եկն նա ընդ եպիսկոպոսս և ընդ գլխաւորս ոմանս յաշխարհէն Հայոց, գտին ամենեքեան ընդ կաթողիկոսին ընդունելութիւն մեծ. ընկալան պարգեւս թագաւորականս և փառս. և տուան ամենեցուն որ ընդ նմա եկեալ էին՝ երեւելի նշանք պատուոյ, հոյակապ տունք և ընդարձակք, կայսերական իջեւանք ի բնակութիւն, և բազում գանձք եւ նշանակք պատուոյ առաքեցան որոց անդէն յաշխարհին իւրեանց մնացեալ էին. և միանգամայն երկից ամաց հարկի երկրին թողութիւն եղեւ ի կայսերէն Հոռոմոց: Բայց միայն հրաման լինէր նոցա ձեռն տալ Հոռոմոց՝ որ վասն նոցին և վասն բովանդակ աշխարհին Հայոց՝ տային պատերազմ ընդ Պարսից: Եւ տիրէին համօրէն աշխարհին և պահէին զայն ընդերկար, և նկուն լինէր զօրութիւն մոգուցն բազում անգամ առաջի քրիստոնէից, յորժամ ելանէին ի պատերազմ ընդդէմ քրիստոնէից: Եւ տեսէր մարտ պատերազմիս այսորիկ զամս վեց: Իսկ որ յետ այնորիկ և զայն յիւրում ժամանակի ասասցուք սակաւուք: Բայց կաթողիկոսն մեռաւ ի մայրաքաղաքին՝ յետ երկուց ամաց, ոչ ժամանեալ, դարձ առնել վերստին յերկիր իւր:

ԻԳ. — Երե որպէս եպիսկոպոսունք Հայոց յորժամ եկին ի մայրաքաղաքն՝ զառաջինն պարզմտութեամբ չորսն յեկեղեցին սինեհոդականաց և հաղորդեցան ընդ եռս:

Ի սկզբան անդ ի գալ կաթողիկոսին Հայոց և այլոց եպիսկոպոսաց և գլխաւոր արանց ընդ նմա, իբրեւ արանցն՝ որք փախուցեալք յանօրէն եւ ի հեթանոսական իշխանութենէ մոգուց եկեալ էին ի թա-

գաւորութիւն քրիստոնէից, զի գտցեն օգնականութիւն, ի ժամանել իւրեանց անդէն վաղվաղակի գտին ընդունելութիւն և պատիւ մեծ: Իսկ նոքա առանց ինչ քննութեան եւ հարցափորձի եւ տարակուսի՝ երթեալ հաղորդէին ընդ Պատրիարքի քաղաքին, անփոյթ լինելով ամենեւին հերձուածոյն եւ ի վիճիցն՝ զոր խանգարիչ ժողովն Բաղկեդոնի մոլծեալ էր յամենայն եկեղեցիս որ ընդ տէրութեամբ Հոռոմոց: Իբրեւ լու եղեւ այս յաշխարհին իւրեանց՝ սրտմտեցան ի վերայ նոցա որ անդ մընացեալ եպիսկոպոսունքն և բնակիչք երկրին և գրեցին առ նոսա խստութեամբ. զոր ժամանակս պահանջէ լռութեամբ ծածկել: Վասն այսորիկ ի բաց կացեալ եկեալ գտանէին, և այնուհետեւ ժողովէին առանձինն յուրոյն ժողով ի վերնատան ուրեք մեծի յորում բնակէր ոմն յիշխանաց նոցին: Անդ գումարէր ժողով ոչ սակաւաթիւ յետ մահուան կաթողիկոսին:

ԻԴ. — Որ ինչ յետ անձնատուր յինչոյ Հայոց յինքն, և զի վասն յաճախութեան իրացն պատմելոց ի եղցանեւ մեք ի բաց քաղաք ի պատմութեան:

Քանզի տեսանեմ թէ բազում ինչ յաւուրս մեր եւ առ մեօք եւ առաւելապէս յաւուրսս յայսորիկ դիպան, և անցանն ըստ սահման գրոց պատմութեանս, մանաւանդ յետ անձնատուր լինելոյ Պարսկահայոց ի Հոռոմոս, որ եղեւ և պատահաց յամի 880 Աղեքսանդրի. վասն այնորիկ ստէպ և հանապազ լինէին պատերազմունք յամենայն կողմանս և ըստ պառնալիք աւերման աշխարհաց և արեան ճապաղիք հասանէին: Յայնմ ժամանակի զօրացաւ դարձեալ Մոգն ըստ խորամանկութեան իւրում և յարձակեցաւ ի վերայ բանակին Հոռոմոց որ ի Հայս. ի սպանանել և ի ջնջել զնոսա որպէս կամէրն և ոչ ինչ վճարել կարացեալ անդ, դառնալոր ի նոցանէ եւ գնալոր անցանէր յաշխարհէն Հայոց որ ի մասին Հոռոմոց, յուսացեալ առնուլ բռնութեամբ զկեսարիա կապա-

ղովկացուց: Բայց սակայն ի մէջ փակէին զնոսն զօրքն անդուստ և կապաղովկացիք անտի բախելով ընդ նոսա, յարձակէին հարկանէին և զամենայն փառս նորա անհետ առնէին և դառնալոր ամօթով յետս: Եւ եթէ զօրավարաց միաբան լեալ էր՝ և ոչ մի որ ի նոցանէ ողջամբ դառնալոր ի տուն իւր: Ապա կայսրն Հոռոմոց ամրացուցանէր զՀայաստան տրօք և ընծայիւք և զօրօք, և առնէր զնա անդրէն հռչակաւոր. մինչեւ եւ բովանդակ Հայոց որ ի մասին Պարսից անձնատուր լինել ի Հոռոմոս. և Հոռոմք տիրեցին աշխարհին: Բազում անգամ յաղթանակ կանգնէին, նուաճէին և ընդ լծով արկանէին ազգս զօրաւորս. այլ ի վախճանի կամ վասն անխորհրդարար գործելոյ զօրագլխաց, և կամ քանզի անարգեալ էր նոցա զԱստուած բազմապատիկ մեղօք, թէեւ թիւ զօրացն էր իբրեւ 100,000 արանց, առաջի կուսակալի միոյ՝ որում էին ոչ աւելի քան 30,000 պատերազմողաց, բովանդակ բանակն Հոռոմոց տագնապէր երկիւղիւ եւ զնային կորակոր փախըստականք, կորուսեալ զգէն և զերիվար: Այնուհետեւ ամբառնալոր գոռոգութիւն Պարսից. առնուին և տիրէին ամենայն աշխարհին Հայոց. եւ բովանդակ աշխարհն իւրն զրեաց ի նմանէ ուխտ հաշտութեան եւ ընկալաւ: Այսպէս աշխարհն ամենայն ընկալաւ և անձնատուր լինէր, դառնալոր անդրէն և անձնատուր լինէր բայց յայնցանէ որք էին ի Կ. Պոլիս յեօթն բայց հետէ, որք ապստամբեալ և պատերազմեալ էին ընդդէմ նոցա:

Ապա առաքեցան հրեշտակք պատուաւորք յերկրոցունց թագաւորութեանցն, զի ըննեալ զպատճառս եղելոցն ի միջի իւրեանց և խօսիցին պայմանս հաշտութեան: Եւ եղեւ այնպէս. նստան իբրեւ զաւուրս տարւոյ միոյ հանդէպ իրերաց, խօսեցան, ի հաւանութիւն միաբանութեան: Քանզի ի կնիւք խաղաղութեան. իսկ կայսրն կույ ի կնիւք խաղաղութեան. իսկ կայսրն արիարար խիզախեալ ասէր. Պահանջէ դա ի մէջ ոսկի որպէս յերկշտէ կամ ի

հպատակէ իւրմէ. արդ գիտասցէ զի զոր մինչեւ ցարդ ոչ է առեալ նորա ի մէջ և դրամ մի, և ոչ յայնմ հետէ առցէ ցորչափ կեամք մեք. եւ եթէ նա ոչ կամի պատուով զիջանել ընդ մեզ ի դաշն, և ոչ մեք հաւանիմք ի հաշտութիւն: Հուսկ ուրեմն խոնարհէր զիջանել Պարսիկն եւ վախճան լինէր գործոյն յետ ընդ երկար եւս անցից այսպիսեաց, զորս բազում մատեանք ոչ բաւէին պատմել, որպէս և ոչ զանցս հակառակութեանց ըստ աշխարհի և ըստ եկեղեցւոյ, զոր մեք վասն յաճախութեանն ի բաց թողաք:

Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՈՑ

ԳԼՈՒԽ ԻԲ. — Վերստին յինքնիւն աւերեալ քաղաքին Արաբիայ որ ի Կապադովկիս, ոչ ծնեալ էր կայսրն Մուրիկ:

Իբրեւ աստուածասէրն Մուրիկ ամբարձեալ լինէր յիշխանութիւն պետութեան, Տիրերիոս անուանէր զնա յիւր անուն Տիրեր, այլ ոչ հաճէր նա ընդ այն, եւ վասն չփոխելոյ զանուն իւր զոր ընկալեալն էր յառաջագոյն ի ծնողաց իւրոց, եւ զորոյմէ ի վերայ ոսկւոյ և այլ ամենայն զրամոց զՄուրիկոս անունն: Յառաջ քան զամենայն խնամ տանէր կանգնել վերքսին և կառուցանել շքով և անուանի առնել զքաղաքն Արաբիս: Առաքէր հոգաբարձուս, զբարբրոս, ընդ ամենայն կողմանս կոչիլ անդր ի պայմանեալ ժամու զհմուտս արուեստագործաց, քարակոփս և քանդակագործս, հիւսուսն եւ ատաղձագործս, որմնաղիրս և դարբինս երկաթոյ, ճարտարս եւ զայլ ամենայն գործաւորս որոշեալ թուով, որոց ամենեցուն պարտք էին հանապազ պարապել ի գործն ըստ սահմանեալ ժամանակին իւրաքանչիւր ըստ իւրում արուեստի: Նախ զեկեղեցին որ անդ՝ եւ քալիւ, և ընդարձակ և մեծագոյն յոյժ շինել: Առաքէր անդր բազում անօթս ոսկւոյ և արծաթոյ և ազնիւ սպասս սեղանոյ և ի զարդ բովանդակ եկեղեցւոյ բազում յոյժ: Առաքէր և մասնատուփ մի մեծ հանգոյն որոց գտանէին յեկեղեցիս

մայրաքաղաքիս, տայր յօրինել և մեռաք-
սեայս առաքել կախել անդ զայն : Նոյն
օրինակ ետ կանգնել անդ հիւրանոց մի
մեծ կճեայ և հրապարակ առ նմա ըստ սո-
վորութեան այլոց քաղաքաց, սրահս ընդ-
արձակս, սիւնազարդս, մեծագործս . ետ
կանգնել և հոյակապ տաճարս, և ապա-
րան մի եւ պարիսպ ամուր : Եւ վասն
այսր բազում տրտունջ լինէր ի ժողովրդ-
դեանն, և ասէին զանգատանօք եթէ զօր
ամենայն աղաղակէ, թէ չիք արծաթ տա-
լոյ, և ոռճիկս զօրաց՝ որք վասն աշխարհին
Հոռոմոց աշխատ լինին և պատերազմին .
իսկ այժմ շինէ յարեւելս և յարեւմուտս
քաղաքս մեծամեծս, որք բազում անգամ
անկեալ ի ձեռս բարբարոսաց քանդեալ
եղեն . և տակաւին ասէ թէ ոչ գոյ արծաթ,
և տաղանդս յոլովս ծախէ . նշանակէին և
զթիւ տաղանդացն, զոր մոռացեալ իմ ոչ
կարեմ սահմանել . միայն գուն գործէ, ա-
սէին, կառուցանել քաղաք և բարգաւա-
ճել, առանց պատկանելոյ Հոռոմոց կամ
մնալոյ ի ձեռս նոցա :

ԻԳ. — Կործանումն քաղաքին Արարի-
ստի յերկրաշարժէ իբր յետ երկուց տուաց
վերստին շինարեան ետրա :

Եւ իբրեւ շինեցաւ քաղաքն Արարիստս,
մանաւանդ թէ մինչ դեռ եւս ի շինութեան
էր, յերկրորդում ամի շինութեանն գայր
վերստին երկրաշարժն մեծ և ահաւոր ի
տեղիս տեղիս զգալի եղեալ բազում ընդ-
արձակ վայրաց . և այս երրորդ անգամ
էր սասանութեան յարեւելս : Եւ որպէս ի
բարկութենէ իմեքէ կործանէր բովանդակ
Արարիստս և անկեալ յաւեր դառնային ի
նմա ամենայն շէնք նորք և հինք, մինչեւ
ի զարմացումն ամեկ զամենեւեան : Իսկ
կայսրն Մուրիկ թէեւ յոյժ թախծեալ
տրտմեցաւ ընդ կործանումն քաղաքին իւ-
րոյ տեսանելով ի նմա զծածուկ ակնար-
կութիւն Աստուծոյ, սակայն ոչ կասէր
տակաւին յետս՝ ի շինելոյ վերստին ըզ-
քաղաքն . զի ամենայն գործաւորք որ ժո-
ղովեալ էին ի շինութիւն նորա ըստ ա-

ռաջին կարգին մնացին ի տեղիս իւրեանց զի
միւսանգամ շինեալ կանգնեցի քաղաքն :

Ի ՎԵՅՅԵՐՈՐԴ ԳՐՈՅ

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Բ .

Պատերազմն Մարկիանոսի Պատրիկ և որ
ինչ յետոյ յիսկեցաւ նմա :

Կամիմք աստանօր և որ յարեւելեան
կողմանս պատահեցաւ՝ սակաւուք նշա-
նակել . և սկսանիմք զպատմութիւն մեր
ի Մարկիանոսէ Պատրիկէ որ էր ի զարմէ
Յուստինեայ կայսեր, և էր այր գովելի,
և մի ի զօրագլխաց այնր ժամանակի ա-
ռաքելոց ընդ արեւելս : Սա այս այր վա-
ռեալ նախանձու քրիստոնէական իշխա-
նութեան՝ ժողովեաց զգօրս իւր և գնացեալ
պաշարեաց զքաղաքն Մծբին, որ տակաւին
ի ձեռս Պարսից էր . զիմեաց բուն զօ-
րութեամբ ի վերայ նորին ի բուն ար-
կանել, պաշարեաց զայն պատնիշաւ . և զի
ածեալ էր ընդ իւր և մեքենագործս, կանգ-
նէր ընդդէմ նորա զմեքենայսն ի վերայ
բարձրաբերձ աշտարակաց և պնդակազմ
աշտարակաց պատնիշին, և պաշարե-
ցաւ քաղաքն, և յուսահատութիւն տիրէր
ի վերայ բնակչաց և զօրաց Պարսից որ
ի նմա վասն կենաց իւրեանց . զի տեսա-
նէին զքաղաքն զոգցես մատնեալ ի ձեռս
Հոռոմոց : Եւ մինչդեռ կային ի ներքս ի
տարակուսի, և արտաքուստ Հոռոմք պա-
տրաստէին առնուլ զքաղաքն և աւերել,
եւ այն ինչ հետամուտ լինէին մտանել
ի ներքս, անդէն ահա հասանէր այր ոմն
վայրագ Ակակիոս Արքեպայոս անուն ի
Յուստինէ կայսերէ առաքեալ առ Մար-
կիանոս, առանց օրինական ինչ պատճա-
ռի, հանել զնա ի գործոյ հրամանատա-
րութեան, հատանել զգօտի նորա, յետս
առնուլ զնշան պատուոյն, և յաշխարհէն
արեւելից ի բաց մերժել : Յանդիման առ-
նէր զհրովարտակն ի ժամուն յորում կայր
Մարկիանոս ի վերայ Մծբնայ, և կամէր
ի միւսում աւուր յարձակել առնուլ ըզ-
քաղաքն : Չայն տեսեալ համօրէն զօրա-

կանին՝ պատէր զնովաւ ահ երկիւղի եւ
լքանէր կորով բազկաց արանցն մինչդեռ
Մարկիանոս գովելին քաջութեամբ զհետ
լինէր պատրաստութեամբ և մերձ էր առ-
նուլ զՄծբին : Եւ իբրեւ լուաւ զպատուէրն,
ասէ Մարկիանոս ցԱկակիոս . Տեսանես,
զի յորպիսի տառապանաց ի ներքոյ ար-
կեալ է մեր զանձինս պաշարմամբ քա-
ղաքիս . կաց վայր մի ապա, և համբեր
մինչեւ ցաւուրս երկուս, և յետ այնորիկ
արա ընդ իս որպէս հրամայեալ է քեզ .
իշխանութիւն ի կայսեր ձեռս է, և զոր
հրամայէ՝ անկ է կատարել : Իսկ նա բրդէր
ի բարկութիւն ի վերայ նորա, նախատէր
և բուն հարկանէր զնմանէ լի բարկու-
թեամբ, ձգէր զնա այսր և անդր ի տես
ամենայն զօրացն և յերկիր կործանեալ
հատանէր ի նմանէ զգօտին, նա և ի թըշ-
նամանէն, ասէին ոմանք թէ հանէր նմա
և ապտակս : Վասն այսորիկ անկաւ աղ-
մուկ շփոթի ի բանակ զօրականին և լքան
ձեռք ամենեցուն : Որք տեսին զթշնամանսն
որ այսպէս յանիրաւի գործեալ էր, ա-
ռեալ զղրօշ նորա եւ ի վայր կորացու-
ցեալ դարձուցանէին յետս . եւ անդէն
դարձուցեալ զօրացն ամենեցուն զերեսս ի
քաղաքէն ի թիկունս՝ երթային փախըս-
տեայ, տրտմեալք և թախծեալք ընդ անցս

սպարապետին իւրեանց, ընդ այրն քաջ և
հաւատացեալ : Մանաւանդ զի առանց հա-
լածելոյ ի թշնամեաց իւրեանց, փոխանակ
առնելոյ զքաղաքն զոր նեղէին պաշար-
մամբ՝ դարձեալ անտի ի բաց գնային, լի-
նէին ծաղր և ծանակ տտելեաց իւրեանց :
Յայնժամ տեսեալ զօրացն Պարսից որ ի
քաղաքին, զաղմուկ զօրացն եւ զարագ
արագ փախուստ նոցա և զթիկնադարձու-
թիւն դրօշուն Մարկիանոսի, յապուշ կըր-
թէին, ի մի վայր ժողովէին, ի գէն վա-
ռէին, զիմէին զկնի հալածել անկանել ի
վերայ հետեւակազօրուն որք մնացեալ էին
ի բացեայ բազում անջրպետութեամբ . ըզ-
բազումս ի նոցանէ սատակեալ յերկիր կոր-
ծանէին : Եւ այսպէս յայպն եւ ի կատակ
արարեալ զեղեալսն Հոռոմս, դառնային ի
քաղաք իւրեանց, և իսկոյն զրեալ ազդ
առնէին թագաւորին իւրեանց, ասելով .
Յաջողեաց (նմա) հարկանել զՀոռոմս նը-
պաստիւք աստուածոցն մերոց մեծաց Արե-
գական և կրակի . քանզի վասն հրամանի
իրիք եկելոյ ի կայսերէն իւրեանց՝ այնչափ
աղմկեալ յարեան ի վերայ միմեանց, մին-
չեւ արկանել անարգաբար զՄարկիանոս
ի պատուոյ, և փախչել ամենեցուն թո-
ղեալ զքաղաքս մեր :

(Շարունակելի)